Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland
His Grace Bishop Hovakim Manukyan, Primate
Saint Yeghiche Armenian Church Parish
Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ
Cranley Gardens, Kensington London, SW7 3BB
t. +44 (0)20 7373 8133 *Pastoral office* email. info@styeghiche.org.uk
www.styeghiche.org.uk https://www.facebook.com/StYeghiche

SUNDAY BULLETIN

1: List of the Sunday Reading, 07th January 2018 Bulletin No 02/18

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅ 6:8-8:2

Stephen Before Council

Ստեփանոս, որ հաւատքով ու զօրութեամբ լեցուած մարդ մըն էր, մեծ սքանչելիքներ եւ նշաններ կը՝ընէր ժողովուրդին մէջ: Բայց ոմանք, այն ժողովարանէն՝ որ կը կոչուէր Ազատագրուածներուն, Կիւրենացիներուն ու Աղեքսանդրացիներուն ժողովարանը, եւ ոմանք՝ որ Կիլիկիայէն ու Ասիայէն էին, կանգնեցան եւ կը վիճաբանէին Ստեփանոսի հետ. բայց կարող չէին դիմադրել այն իմաստութեան ու հոգիին, որով ան կը խօսէր: Այն ատեն կաշառեցին քանի մը մարդիկ, որպէսզի ը՝սեն. «Մենք լսեցինք թէ ան հայհոյական խօսքեր կ՝արտասանէր Մովսէսի եւ Աստուծոյ դէմ»: Այսպէս՝ գրգռեցին ժողովուրդը, երէցներն ու դպիրները, եւ հասնելով անոր վրայ՝ յափշտակեցին զինք ու տարին ատեանին առջեւ: Սուտ վկաներ ներկայացուցին, որոնք կը՝սէին. «Այս մարդը չի դադրիր հայհոյական խօսքեր արտասանելէ այս սուրբ տեղին եւ Օրէնքին դէմ: Որովհետեւ լսեցինք իրմէ, որ կը՝սէր թէ “այս Նազովրեցի Յիսուսը պիտի քակէ այս տեղը, ու պիտի փոխէ Մովսէսի մեզի աւանդած սովորութիւնները”»: Բոլոր ատեանին մէջ բազմողները երբ ակնապիշ նայեցան անոր, անոր երեսը տեսան՝ հրեշտակի երեսի պէս:

Այդ օրը մեծ հալածանք եղաւ Երուսաղէմի մէջ եղող եկեղեցիին դէմ: Առաքեալներէն զատ՝ բոլորն ալ ցրուեցան Հրէաստանի ու Սամարիայի երկրամասերուն մէջ

Acts 6:8-8:2

And Stephen, full of grace and power, was performing great wonders and signs among the people. But some men from what was called the Synagogue of the Freedmen, *including* both Cyrenians and Alexandrians, and some from Cilicia and Asia, rose up and argued with Stephen. But they were unable to cope with the wisdom and the Spirit with which he was speaking. Then they secretly induced men to say, “We have heard him speak blasphemous words against Moses and *against* God.” And they stirred up the people, the elders and the scribes, and they came up to him and dragged him away and brought him before the Council. They put forward false witnesses who said, “This man incessantly speaks against this holy place and the Law; for we have heard him say that this Nazarene, Jesus, will destroy this place and alter the customs which Moses handed down to us.” And fixing their gaze on him, all who were sitting in the Council saw his face like the face of an angel.

And on that day a great persecution began against the church in Jerusalem, and they were all scattered throughout the regions of Judea and Samaria, except the apostles.

2: A short interpretation of the Gospel reading under the title The hard sayings’

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԷՏԱՐԱՆԵՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ 12:24-26

Fellowship With Jesus

Ճշմա՛րտապէս, ճշմա՛րտապէս կը յայտարարեմ ձեզի. “Եթէ ցորենին հատիկը հողին մէջ իյնալով չմեռնի՝ ինք միայնակ կը մնայ. բայց եթէ մեռնի՝ շատ պտուղ կը բերէ”: Ա՛ն որ կը սիրէ իր անձը՝ պիտի կորսնցնէ զայն, եւ ա՛ն որ կ՚ատէ իր անձը այս աշխարհի մէջ՝ յաւիտենական կեանքին համար պիտի պահէ զայն: Եթէ մէկը կը սպասարկէ ինծի՝ թող հետեւի ինծի. ու ես ո՛ւր որ եմ, իմ սպասարկուս ալ հո՛ն պիտի ըլլայ. եթէ մէկը կը սպասարկէ ինծի, Հայրը պիտի պատուէ զինք»:

The Holy Gospel of Jesus Christ according to John 12:24-26

“Truly, truly, I say to you, unless a grain of wheat falls into the earth and dies, it remains alone; but if it dies, it bears much fruit. “He who loves his life loses it, and he who hates his life in this world will keep it to life eternal. “If anyone serves Me, he must follow Me; and where I am, there My servant will be also; if anyone serves Me, the Father will honor him.

Ի՞նչ էին ասում մարգարեները Տիրոջ ծննդյան մասին

Նախագետ Աստված նախքան Իր կուսածին գալուստը բազում օրինակներով պատկերեց Իր մարդանալու և չարչարանքների խորհուրդը, որպեսզի երբ ճշմարտապես գա, մարդիկ չտարակուսեն: Ըստ այդմ ասում է առաքյալը. «**Աստված բազմապիսի ձևերով և այլազան օրինակներով նախապես խոսեց մեր հայրերի հետ մարգարեների միջոցով**» (Եբր. Ա 1): Տերը նախ երևաց առաջին արդարներին՝ Աբրահամին՝ երկու հրեշտակների ուղեկցությամբ, և նրա վրանում կերակրվեց, ապա՝ Հակոբ նահապետին՝ «**սանդուղքի**» տեսիլքով, որով Աստված ցույց տվեց օրինակը խաչի ու Խաչյալի, այնուհետև Հակոբի հետ գոտեմարտելով ցույց տվեց Իր միանալը մարդկային բնությանը: Նույն Տերը երևաց նաև Մովսեսին՝ «**անկեզ մորենու**» տեսիլքով, որն այրվում էր, սակայն չէր սպառվում, ինչը խորհրդանշում է կուսական արգանդը, որի մեջ իջավ Աստվածային Հուրը և վառեց մարմնի ճրագը՝ որպես Լույս աշխարհին: Նույնպես և մյուս մարգարեներին հայտնեց Իր Մարմնով գալստյան, ինչպես նաև ծննդյան ժամանակի ու տեղի մասին, որի համաձայն՝ Հիսուս Քրիստոս պետք է ծնվեր Դավիթ թագավորի հայրենի Բեթղեհեմ քաղաքում, նույն ցեղից սերող Կույս Մարիամից:

Արդ՝ տեսնենք, թե երբ պետք է գար Տերը: Մովսես մարգարեն ասում է. «**Քո եղբայրների միջից քո Տեր Աստվածն ինձ նման մարգարե պիտի մեջտեղ հանի, Նրան կլսեք**» (Բ Օրենք ԺԸ 15): Բայց այստեղ չի ասվում գալստյան ժամանակի և տեղի մասին: Քննարկենք Հակոբ նահապետի մարգարեությունը՝ ասված Հուդայի համար. «**Հուդա՛, քեզ կօրհնեն քո եղբայրները», և դարձյալ՝ «Հուդայից իշխան չի պակասելու և ոչ՝ առաջնորդ նրա կողից, մինչև որ գա Նա, Ում պատկանում են հանդերձյալները, որովհետև Նա է հեթանոսների հույսը**» (Ծնն. ԽԹ 8, 10): Համաձայն այս մարգարեության՝ Տիրոջ գալստյան ժամանակ պիտի վերանար պետն ու իշխանը Հուդայի տնից: Ըստ Հովսեփոս պատմիչի՝ Հրեաստանի Հերովդես արքայի (ով եդոմացի էր հոր կողմից և արաբացի՝ մոր) թագավորության երեսունմեկերորդ տարում ծնվեց Հիսուս: Սրանով նշան տրվեց նաև, որ Տիրոջ գալստյան ժամանակ դադարելու էր հեթանոսների թագավորությունը:

Մեկ այլ նշան ևս գալստյան ժամանակի մասին. «**Նրանց կհովվես երկաթյա գավազանով**» (Սաղմ. Բ 9): Երկաթյա գավազան է անվանվում Հռոմեական թագավորությունը: Եվ իրոք, այն ժամանակ Իսրայելը Հռոմեական կայսրության մեջ էր:

3: List of the Feasts celebrated in the Armenian church

Դարձյալ մեկ այլ մարգարեություն, որտեղ հայտնապես խոսվում է Քրիստոսի գալստյան ժամանակի մասին, որը լինելու էր Երուսաղեմը վերաշինելուց հետո. «**Երուսաղեմի շինելուց մինչև առաջին օծումը կա յոթ յոթնյակ և վաթսուներկու յոթնյակ**» (Դան. Թ 26): Արդ՝ վաթսունինը յոթնյակը կազմում է չորս հարյուր ութսուներեք տարի, այսինքն՝ Երուսաղեմի կառուցվելուց չորս հարյուր ութսուներեք տարի անց վերանալու էր իշխանն Իսրայելից, և ապա գալու էր այլազգի թագավորը: Եվ այդ տարի ծնվեց Քրիստոսը:

Այժմ՝ տեղի մասին. «**Եվ դո՛ւ, Բեթղեհե՛մ, Եփրաթայի սակավամարդ տուն, կլինես Հուդայի երկրի հազարավորների մեջ, քեզանից պիտի ելնի Ինձ համար Իսրայելի մի իշխան, և Նրա ծագումն աշխարհի սկզբի օրերից է**» (Միքիա Ե 2): Իսկ Դավիթն ասում է. «**Ահա Նրա մասին լսեցինք Եփրաթայում, և Այն գտանք մայրիների դաշտերում**» (Սաղմ. ՃԼԱ 6): Քանզի Աբրահամը գնեց Սահառի որդի Եփրոնից նրա ագարակի սահմաններում գտնվող քարայրը (տե՛ս Ծնն. ԻԳ 16-20), և հետագայում այնտեղ թաղվեցին ինքը, Սառան, Իսահակը, Ռեբեկան, Լիան, Հակոբը, քանի որ «**հեռվից տեսան**» Տիրոջ այնտեղ իջնելը: Այս վայրը Եփրոնի անունով կոչվեց Եփրաթա, որը թարգմանվում է պտղաբերություն, քանզի այնտեղից մեզ տրվեց կյանքի Պտուղը: Այնուհետև այն վերանվանվեց Բեթղեհեմ, որը թարգմանվում է հացի տուն, քանզի Երկնավոր հացը՝ Հիսուս Քրիստոս, Բեթղեհեմում ընծայվեց աշխարհին: Այստեղ է նաև նախամոր՝ Եվայի շիրիմը, ում Աստված ասաց. «**Տրտմությամբ որդի ծնես**» (Ծնն. Գ 16): Եվ երջանիկ Մարիամն այստեղ՝ նախաստեղծի գերեզմանի վրա, ծնեց Բանն Աստծուն առանց տաժանելի երկունքի ու չարչարանքների և ազատեց նախամորը վտանգավոր երկունքից:

Իսկ թե ինչպես է գալու, այս մասին Եսային է ասում. «**Ահա Կույսը պիտի հղիանա և որդի ծնի, և Նրա անունը պիտի լինի Էմմանուել**» (Եսայի Է 14): Իսկ թե որ ազգատոհմից է լինելու Կույսը, այդ մասին ասում է սաղմոսերգուն. «**Տերը ճշմարտությամբ երդվեց Դավթին և չստեց նրան. քո որովայնի պտղից պիտի նստեցնեմ քո գահին**» (Սաղմ. ՃԼԱ 11): Նաև ասում է. «**Նրա սերունդը կհաստատեմ հավիտյանս հավիտենից և Նրա գահը, ինչպես օրերը երկնքի**», ապա ավելացնում. «**Ինչպես լուսին, Նրա աթոռն իմ առջև հավերժ հաստատված կմնա երկնքում**» (Սաղմ. ՁԸ 30, 38): Այս խոսքերը Քրիստոսի համար ասվեցին և ոչ թե Սողոմոնի, որովհետև վերջինիս աթոռն իբրև արեգակ հաստատուն չմնաց և ոչ էլ իբրև լուսին: Սրանից իմանում ենք, որ Դավթի ցեղից է լինելու սուրբ Կույսը: Նաև ասում է. «**Դու հանեցիր ինձ արգանդից**» (Սաղմ. ԻԱ 9), այսինքն՝ առանց այր մարդու անկողնու, որովհետև «կույս արգանդից կորզված մարմին» է Նա ասվում:

Հեղինակ՝ Արամ Դիլանյան

Հիսուս Քրիստոսի ծննդյան ու հայտնության տոնախմբության երրորդ օրվա խորհուրդը

Արարչության երրորդ օրն Աստված ջրերը մեկտեղ հավաքեց, և երևաց ցամաքը: Այդ օրը Տերն Իր խոսքով երկիրը զարդարեց բույսերով, տնկիներով, գեղեցիկ բուրաստաններով ու զանազան ծաղկազարդ գույներով: Իսկ այսօր՝ նույն երրորդ օրը, նոր արարչագործության՝ մեր Աստծու՝ Հիսուս Քրիստոսի ծննդյան ու հայտնության տոնախմբությունն է և հիշատակը Բեթղեհեմի մանկանց, ովքեր Քրիստոսի փոխարեն սպանվեցին Հերովդեսի կողմից, և նրանց արյան հեղմամբ՝ Բեթղեհեմի երկիրն առավել պայծառացավ ու զարդարվեց:

Մատթեոս ավետարանիչը գրում է. «**Ձայն գուժեց Ռամայում. ողբ, լաց ու սաստիկ կոծ**» (Մատթ. Բ 17): Ռաման քաղաք է Հորդանանի և Երուսաղեմի միջակայքում: Երբ Նաբուքոդոնոսորը, արշավելով Երուսաղեմի վրա, Ռամայում կոտորեց բոլոր արուներին, և ժողովրդի լացի ու ողբի ձայնը մինչև Երուսաղեմ հասավ:

Եվ ևս մեկ անգամ լաց ու կոծ եղավ, երբ Բենիամինի որդիների կողմից ղևտացու հարճին լլկելու և սպանելու համար Բենիամինի ցեղի մեջ կոտորած եղավ (տե՛ս Դատ. ԺԹ): Սրանք օրինակն են Հերովդեսի կողմից Բեթղեհեմի մանուկների կոտորածի: Սրա խորհուրդն այն է, որ Ռաքելը՝ Բենիամինի մայրը, լալիս էր իր որդիների վրա, քանի որ Քրիստոսի համար չմեռան, այլ իրենց չարության պատճառով: Այնտեղ Ռաքելը Բենիամինին ծննդաբերելիս մեռավ (տե՛ս Ծնն. ԼԵ 16-19), իսկ այստեղ Քրիստոսի ծննդյամբ մանուկները սպանվեցին:

Ոմանք ասում են, թե Բեթղեհեմի մանուկները յոթանասուներկու հոգի էին, իսկ ուրիշներն էլ, թե՝ ութսունչորսը, և դրա համար Տերը նախ ընտրեց տասներկու աշակերտներ և ապա՝ յոթանասուներկու, որով ստացվեց ութսունչորս:

Արամ Դիլանյան, հատված՝ «Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու տոները» գրքից:

4: Հոգեհանգիստ - Memorial Service

A memorial service at St Yeghiche Armenian Church is requested:

By the Sarkissian Family for the soul of their Wife, Mother and Grandmother the late **SETA SARKISSIAN (ՍԵԴԱ ՍԱՐԳԻՍԵԱՆ),** also for all the old and new deceased members of the **SARKISSIAN** and **DURGUERIAN** Families.

By Raffi and George Essaian and their Families for the soul of their Cousin the late **EDVART HAGOPIAN (ԵԴՎԱՐՏ ՅԱԿՈԲԵԱՆ)**, also for all the old and new deceased members of the **HAGOPIAN, MARKARIAN** and **ESSAIAN** Families.

By the St Yeghiche Armenian Church Deacons for the soul of their departed members the late **DEACON HAGOP KEOSHGERIAN (ՅԱԿՈԲ ԿԵՈՇԳԵՐԵԱՆ)** and **DECON DERTAD SHAMELIAN (ՏՐԴԱՏ ՇԱՄԼԵԱՆ)**, also for all the old and new deceased members of the **KEOSHGERIAN** and **SHAMELIAN** Families.

By Mrs Vartouhi Shamelian and Family for their Parents and Grandparents the late **SARKIS, HAYGOHI, MAKROUHI, DAWLAT DER-MOVSESSIAN (ՍԱՐԳԻՍ ՀԱՅԳՈՒՀԻ՝ ՄԱԳՐՈՒՀԻ՝ ՏԱՒԼԱՏ ՏԵՐ-ՄՈՎՍԵՍՍԵԱՆ)** and **AREVAHAD, LUCIN, BEDROS BABAJANIAN (ԱՐԵՎԱՀԱՏ՝ ԼՈՒՍԻՆ՝ ՊԵՏՐՈՍ ՊԱՊԱՋԱՆԵԱՆ)**, also for all the old and new deceased members of **SHAMELIAN, DER-MOVSESSIAN** and **BABAJANIAN** Families.

By Vegain, Anoush, Hovhannes and Hovnan Doula for their father and Grandfather the late **GARABED BOZOGHLANIAN (ԿԱՐԱՊԵՏ ՊՈՁՈՂԼԱՆԵԱՆ)**, on the 12th anniversary memorial of his passing, also for all the old and new deceased members of **BOZOGHLANIAN** and **DOULA** Families.

By Dr and Mrs Robert Istepanian and Family for their Father and Grandfather the late **SHUKRI ISTEPANIAN** on his 40th Year anniversary of his passing, also for their Grandmother and Great grandmother the late **GOLISAR ARTIN BUBOLIAN** and for all the old and new deceased members of the **ISTEPANIAN** and **BUBOLIAN** Families

By Mr and Mrs Saro Kevorkian for their Father and Grandfather the late **ANTRANIG NSHAN KEVORKIAN** and for all the old and new deceased members of the **KEVORKIAN** Family.

By the St Yeghiche Armenian Church Parish for the souls of the departed primates of United Kingdom the late **BISHOP BESAG TUMANIAN, ARCHBISHOP NERSES BOZABALIAN** and **ARCHBISHOP YEGHICHE GIZIRIAN**.

.May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Requiem Service (Hokehankisd)

For Requiem Service (Hokehankisd), please call the church office at **020 7373 8133**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated.

ANNOUNCEMENT:

Please remember our Church in your prayers.

Your kind donations are gratefully accepted:

In order to meet the ever increasing church functioning expenses, The St Yeghiche Parish Council would like to appeal to all members of the community for their annual membership dues and generous donations. Please complete this form and hand your donation to the members of the Parish Council at the side entrance of the Church. Alternatively please post your cheque to: St Yeghiche Armenian Church Parish c/o Dr. Setrag Karanfilian, 13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB. Please make your cheques payable to: "St Yeghiche Armenian Church".

Alternatively you can arrange a standing order or donation by bank transfer to our St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at:

HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

I wish to arrange a standing order/make a donation £ ……to the St Yeghiche Arm. Church Parish.

Name: ……...……...

Address: ..……...……..